ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

« 23 » մայիս 2025թ. No 3146 - Ա

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի 30-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը անվտանգության, արդյունավետության և որակի գնահատման N 01/2329-25 առ 19.05.2025թ. փորձագիտական եզրակացությունը,

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Ընդհանուր հիմունքներով գրանցման ընթացակարգով գրանցել թվով 1 դեղը՝ համաձայն հավելվածի:

2.Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության քարտուղարության պետ Ա. Առաքելյանին՝

1) Սույն հրամանն ընդունվելու պահից տեղեկացնել «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը և Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լ. Բաբախանյանին:

2) «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ա. Բաղրյանին՝

1) Ապահովել սույն հրամանով գրանցված դեղի վերաբերյալ տվյալների հրապարակումը գրանցամատյանում՝ համաձայն Հայաստանի Հանրապետության

կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի 32-րդ կետի պահանջների:

2) Սույն հրամանը ստանալուց հետո ապահովել գրանցված դեղի վերաբերյալ տվյալների ընդգրկումը գրանցամատյանում՝ լիազոր մարմնի հաստատված կարգով:

4. Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լ. Բաբախանյանին՝

1) ապահովել սույն հրամանի տեղադրումը առողջապահության նախարարության պաշտոնական կայքում:

5. Սույն հրամանն ուժի մեջ մտնելու պահից հինգ աշխատանքային օրվա ընթացքում ապահովել հավելվածում նշված դեղի վերաձևակերպված հավաստագրի տրամադրումը հայտատուին:

Ա.ԱՎԱՆԵՍՅԱՆ

Recoverable Signature

X 

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157

Հավելված

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի

2025 թվականի մայիսի « 23 » - ի N 3146- Ա հրամանի

Ընդհանուր հիմունքներով (հաջորդ թողարկման ձև) գրանցման երաշխավորված դեղերի ցանկ համաձայն ՀՀ կառավարության N 162-Ն առ 28.02.2019 որոշման

| ՀՀ | Առևտրային անվանումը | Ակտիվ բաղադրատարրի համընդհանուր անվանումը | Դեղաձևը | Դեղաչափը և Փաթեթավորումը, թողարկման ձևը | Դեղի արտադրական գործընթացում ներգրավված բոլոր արտադրողները (անվանում, գտնվելու վայր) | երկիր | Դեղի պետական գրանցման հավաստագրի իրավատերը (անվանում, գտնվելու վայր) | երկիր | Բաց թողնման կարգավիճակը | եզրակացության համար և ամսաթիվ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Պրոտարգոլի լուծույթ 2% | արծաթի պրոտեինատ | լուծույթ տեղային կիրառման | 20մգ/մլ; 15մլ պլաստիկե շշիկ-կաթոցիկ, 15մլ պլաստիկե տարա ցողացիր մխոցով | ԷՍԿՈ-ՖԱՐՄ ՍՊԸ, Նոր Նորք 5-րդ զանգված, Միկոյան 13, Երևան 0079 | Հայաստանի Հանրապետություն | ԷՍԿՈ-ՖԱՐՄ ՍՊԸ, Նոր Նորք 5-րդ զանգված, Միկոյան 13, Երևան 0079 | Հայաստանի Հանրապետություն | ԱԴ | 21607/1/1 16.05.2025 |